https://www.coe.int/en/web/minorities/armenia

ՆԽ - Հանրային

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ	Բանաձեւեր	**CM/ResCMN(2018)5 բանաձեւ**	2 մայիսի 2018 թվական

Հայաստանի կողմից «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ թիվ CM/ResCMN(2018)5 բանաձեւ

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2018 թվականի մայիսի 2-ին Նախարարների ներկայացուցիչների 1315-րդ նստաշրջանում)

Նախարարների կոմիտեն, «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Շրջանակային կոնվենցիա) 24-26-րդ հոդվածների դրույթների համաձայն՝

հաշվի առնելով Նախարարների կոմիտեի կողմից Շրջանակային կոնվենցիայի 24-26-րդ հոդվածների համաձայն ընդունված՝ դիտանցման պայմանների մասին կանոններ սահմանող 1997 թվականի սեպտեմբերի 17-ի Res(97)10 բանաձեւը,

հաշվի առնելով Res(97)10[1] բանաձեւի ընդունման համատեքստում ընդունված քվեարկության կարգը,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից 1998 թվականի հուլիսի 20-ին ներկայացված վավերացման փաստաթուղթը,

---

[1] 1997 թվականի սեպտեմբերի 17-ի **Res(97)10** բանաձեւի ընդունման համատեքստում Նախարարների կոմիտեն նաեւ ընդունել է հետեւյալ կանոնը. «Շրջանակային կոնվենցիայի 24.1 եւ 25.2 հոդվածների համաձայն՝ որոշումները համարվում են ընդունված քվեարկելու իրավունք ունեցող Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչների երկու երրորդի, այդ թվում՝ Նախարարների կոմիտեի անդամ լինելու իրավունք ունեցող Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչների ձայների մեծամասնությամբ»:

https://www.coe.int/en/web/minorities/armenia

վկայակոչելով, որ Շրջանակային կոնվենցիայի համաձայն՝ 2014 թվականի դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը փոխանցել է դիտանցման չորրորդ փուլի վերաբերյալ իր պետական զեկույցը,

ուսումնասիրելով Խորհրդատվական կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի մայիսի 26-ին ընդունված չորրորդ եզրակացությունը,

կայացնում է հետեւյալ եզրակացությունները Հայաստանի Հանրապետության վերաբերյալ.

իշխանություններին առաջարկվում է հաշվի առնել Խորհրդատվական կոմիտեի չորրորդ եզրակացության I եւ II բաժիններում ներառված դիտարկումները եւ առաջարկությունները: Նրանք մասնավորապես պետք է ձեռնարկեն Շրջանակային կոնվենցիայի իրագործման հետագա խթանմանն ուղղված հետեւյալ միջոցառումները:

Անհապաղ գործողություններ պահանջող առաջարկություններ[2]

➢ «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքը եւ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքներից օգտվելու վրա ազդեցություն ունեցող այլ օրենսդրություն մշակելուց առաջ եւ դրա ընթացքում իրականացնել քաղաքացիական հասարակության եւ ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ լայնածավալ խորհրդակցությունների գործընթաց, ապահովել այդ օրենսդրության՝ միջազգային չափանիշներին լիակատար համապատասխանություն.

➢ մշակել նախաձեռնողական մոտեցում՝ Շրջանակային կոնվենցիային համապատասխան փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը խթանելու համար, ապահովել, որ Շրջանակային կոնվենցիայով սահմանված

[2] Ներքեւում բերված առաջարկությունները ներկայացված են Շրջանակային կոնվենցիայի համապատասխան հոդվածների հերթականությամբ:

իրավունքներից օգտվելուն առնչվող քաղաքականությունները մշակվեն փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցությամբ՝ նրանց իրական կարիքներն արտացոլելու նպատակով.

➢ կրկնապատկել եզդի երեխաների՝ հատկապես աղջիկների առջեւ ծառացած՝ կրթության մատչելիության հետ կապված դժվարությունները վերացնելուն ուղղված ջանքերն առանց լրացուցիչ ձգձգումների, շարունակել բոլոր երեխաների համար նախադպրոցական կրթության ապահովմանն ուղղված ջանքերը, մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան վերանայել օրենսդրությունը՝ առանց ամուսինների գիտակցված համաձայնության, ճնշում կամ բռնություն գործադրելու միջոցով կնքված հարկադիր ամուսնությունները քրեականացնելու նպատակով.

➢ խորհրդակցել ազգային փոքրամասնությունների տեղական ներկայացուցիչների հետ՝ վարչական մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուներն օգտագործելու եւ մեծ թվով՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով բնակեցված աշխարհագրական տարածքներում տեղագրական նշանների անհրաժեշտությունը գնահատելու համար, իրականացնել իրազեկության բարձրացմանն ուղղված արշավ՝ խրախուսելով տեղական կառավարման մարմինների հետ շփվելիս փոքրամասնությունների լեզուների օգտագործումը:

Այլ առաջարկություններ

➢ ապահովել, որ հետագա մարդահամարների, ինչպես նաեւ այլ կերպով տվյալների հավաքագրման համար առկա լինեն համապատասխան ընթացակարգեր, որպեսզի հնարավոր լինի տրամադրել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց դրության վերաբերյալ հավաստի տվյալներ, ապահովել մեկից ավելի էթնիկ պատկանելություն նշելու հնարավորություն՝ կիրառելի միջազգային չափանիշներին համապատասխան.

https://www.coe.int/en/web/minorities/armenia

- խրախուսել փոքրամասնությունների տարբեր խմբերի միջեւ դրական հարաբերությունները, ստեղծել ու խթանել եզդի եւ քուրդ փոքրամասնությունների միջեւ երկխոսության հնարավորությունները.

- ապահովել, որ Մարդու իրավունքների պաշտպանը (Օմբուդսմեն) ունենա «Խտրականության արգելքի մասին» օրենքի շրջանակներում իրեն վերապահված նոր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսները.

- վերանայել քրեական օրենսդրությունը՝ ռասայական եւ այլ հիմքերով ատելության շարժառիթները բոլոր հանցագործությունների համար ծանրացնող հանգամանք դիտարկելու նպատակով, ընդունել համակարգչային համակարգի միջոցով ռասիստական կամ քսենոֆոբիական բնույթի նյութեր տարածելը կամ այլ ճանապարհով դրանք հասանելի դարձնելը եւ համացանցում ատելություն տարածող արարքները քրեականացնող դրույթներ, իրականացնել ատելության շարժառիթներով հանցանքի տարբեր տեսակների մասին հասարակության շրջանում իրազեկվածությունը բարձրացնելուն ուղղված իրազեկման արշավներ եւ ստեղծել մատչելի մեխանիզմներ՝ ատելության հանցանքի մասին հայտնելու համար.

- ապահովել, որ ազգային փոքրամասնությունների մշակույթը եւ պատմությունը պատշաճ մակարդակով ներկայացվեն եւ ուսուցանվեն բոլոր դպրոցներում, այդ թվում՝ այն դպրոցներում, որտեղ հաճախում են ազգային մեծամասնությանը պատկանող երեխաներ, եւ որ դրանց միջոցով ազգային փոքրամասնությունների մշակույթները ներկայացվեն համակողմանիորեն՝ որպես հայ հասարակության անբաժանելի մաս.

- ապահովել, որ հանրային ռադիոն շարունակի պատրաստել եւ տարածել ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ՝ Շրջանակային կոնվենցիայով սահմանված համապատասխան դրույթների համաձայն, ինչպես նաեւ ապահովել փոքրամասնությունների լեզուներով ռադիոհեռարձակման ու հեռուստահեռարձակման հնարավորություններ,

https://www.coe.int/en/web/minorities/armenia

փոքրամասնությունների լեզուներով հաղորդումները դիտարկել որպես չափանիշ մասնավոր ոլորտի՝ հայտ ներկայացնող ներկայացուցիչներին ռադիոհաճախականությունների եւ հեռուստաալիքների տրամադրման ժամանակ.

- ապահովել Ընտրական օրենսգրքի՝ փոքրամասնություններին առնչվող դրույթների արդյունավետ իրականացում, «Ազգային փոքրամասնությունների մասին» նոր օրենքով ապահովել հասարակական կյանքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ պայմանների առկայություն: